ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Մ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մարքսիստական կուսակցության ագրարային ծրագրի անկյունաքարը կազմում է հողի ազգայնացման պահանջը։ Այդ պահանջը գիտականորեն հիմնավորելու գործում կարևոր նշանակություն ունի Կ. Մարքսի հայտնագործած հողային ռենտայի ուսմունքը։ Մարքսը ցույց տվեց, որ գյուղատնտեսության համեմատաբար հետամնացության, մանր տնտեսությունների քայքայման ու սնանկացման հիմնական պատճառը հողի մասնավոր սեփականության մոնոպոլիան է։

Մարքսը, հենվելով հողային ռենտայի ուսմունքի վրա, տեսականորեն հիմնավորեց հողի ազգայնացման ռեալ անհրաժեշտությունը, ազգայնացումը դիտելով որպես գյուղատնտեսության մեջ արտադրողական ուժերի զարգացման պրոգրեսիվ պայման։

Հողի ազգայնացումը նախ և առաջ նշանակում է բացարձակ ռենտայի և այն յուրացնող պորտաբույծ դասակարգի ոչնչացում։

Բուրժուական տնտեսագետները հողի ազգայնացման պահանջն առաջին անգամ առաջադրեցին XVIII դ. վերջին։ Հողի ազգայնացման գաղափարը լայն տարածում գտավ Ռիկարդոյի ռադիկալ հետևորդների մոտ։ XVIII դ. մեծ հաջողություն ուներ Հենրի Ջորջի, Լենինի արտահայտությամբ «հողի բուրժուական նացիոնալիզատորի» ուսմունքը։ Նա պաշտպանում էր մարդկանց հավասարության սկզբունքը և պահանջում այն տարածել նաև հողի վրա։ Այդ նպատակին հասնելու համար նա առաջարկում էր օտարացնել հողը նրա տերերից և դարձնել պետական սեփականություն[1]։

Մարքսը մշտապես ընդգծում էր, որ հողի ազգայնացումը որպես բուրժուական միջոցառում չի կարող ինքնին փոխել բուրժուական հասարակության զարգացման բնույթը։ Հողի ազգայնացումը ոչնչացնում էր բացարձակ ռենտան, որ ստանում էր հողատերը, դիֆերենցիալ ռենտան հանձնում պետությանը, իջեցնում հացի գինը, նպաստում արտադրողական ուժերի զարգացմանը։ Բայց հողի ազգայնացումը կապիտալիզմի ժամանակ չի կարող կասեցնել գյուղացիության քայքայման պրոցեսը։

Այնուհանդերձ Մարքսը և Էնգելսը պաշտպանում էին հողի ազգայնացման պահանջը, այն համարելով պրոգրեսիվ միջոցառում։

Եթե XIX դ. սկզբին բուրժուական տեսաբանները՝ ի դեմս Ռիկարդոյի առաջին հետևորդների, դեռևս կարող էին առանց վախենալու դնել հողի ազգայնաց-

---

[1] Е. Кочетовская, Национализация земли в СССР, М., 1952, стр. 45.

ման հարցը և դրանով իսկ բացահայտել բուրժուազիայի և հողատերերի միջև եղած հակասությունը, ապա կապիտալիզմի զարգացման զուգընթաց բուրժուազիան շտապում էր «մոռանալ» հողի ազգայնացման իր երբեմնի պահանջը։ Նախ բուրժուազիան տիրապետող դասակարգ դառնալուց հետո, քայլ առ քայլ մերձենում է հին դասերի՝ ազնվականության, իշխանների հետ։ Կապիտալիզմի զարգացման բարձրագույն փուլում՝ իմպերիալիզմի դարաշրջանում տեղի է ունենում ֆինանսական կապիտալի և կալվածատիրական հողատիրության միահյուսում։ Բուրժուազիան ևս ձգտում է խոշոր հողատեր դառնալ, իսկ հողատերերը իրենց հերթին ձգտում են մասնակցել կապիտալիստական արտադրության պրոցեսին։

Այսպիսի պայմաններում, նախ՝ բուրժուազիան օրակարգից հանում է հողի ազգայնացման հարցը։ Բուրժուազիան և կալվածատերերը դաշինք են կնքում բանվոր դասակարգի և գյուղացիության դեմ պայքարելու համար։

Երկրորդ՝ բուրժուազիան վախենում է հողի ազգայնացումից, քաջ գիտակցելով, որ դրանից հետո աշխատավորները կառաջադրեն գործարաններն ու ֆաբրիկաները ազգայնացնելու խնդիրը։ Այդ իսկ պատճառով բուրժուազիան կանգնում է կալվածատիրական հողատիրությունը պաշտպանելու դիրքում։

Երրորդ՝ իմպերիալիզմի դարաշրջանում բանվոր դասակարգը դառնում է ինքնուրույն քաղաքական ուժ և հակադրվում բուրժուազիային։ Պրոլետարիատի և բուրժուազիայի դասակարգային անտագոնիստական հակասությունը հասնում է իր բարձրագույն կետին, երբ բուրժուազիայի տապալումը դառնում է անխուսափելի։ Ահա թե ինչու բուրժուազիան, վախենալով իր գերեզմանափորից՝ պրոլետարիատից, մերժում է բոլոր առաջադիմական, այդ թվում և հողի ազգայնացման պահանջները.

Չորրորդ՝ գյուղացիությունը, որ վաղ բուրժուական հեղափոխություններում հանդիսանում էր բուրժուազիայի հենարանը, նույնպես փոխում է իր դասակարգային դեմքը։ Գյուղացիությունը կապիտալիզմի օրոք շերտավորվում է, որի պատճառով էլ մի բևեռում կենտրոնանում է գյուղատնտեսական պրոլետարիատի հսկայական բանակը, իսկ մյուս բևեռում՝ գյուղական բուրժուազիան։

«Այդ պատճառով գյուղացիներն իրենց բնական դաշնակիցն ու առաջնորդն են գտնում քաղաքային պրոլետարիատի մեջ, որը կոչված է բուրժուական կարգը տապալելու»[2]։

Զարմանալի չէ, հետևաբար, որ բուրժուազիան կապիտալիզմի զարգացման զուգընթաց հաճույքով կենդանացնում է այն ուսմունքը, որտեղ պաշտպանվում են խոշոր հողատերերի շահերը և իրավունքները։ Այդ տեսակետից պատահական չէ Ռոդբերտուսի ռեակցիոն ուսմունքի երևան գալը։ Նրա հիմնական խնդիրն էր պաշտպանել խոշոր կալվածատիրական հողատիրությունը Գերմանիայում, մի երկիր, ուր խոշոր կալվածատիրությունը հանդիսանում էր ռեակցիայի պատվարը և ագրեսիվ իմպերիալիստական պատերազմների ջատագովը։ Ռոդբերտուսը զայրույթով մերժում է հողի ազգայնացման բոլոր նախագծերը։ «Ռոդբերտուսի թեորիայի մեջ ոչ մի դրան պատմականություն (իստորիզմ) չկա, ոչ մի դրան պատմական ռեալություն, որովհետև նա վերց-

2 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, Երևան, հ. 1, 1950, էջ 394։

նում է հողագործությունն առհասարակ, ժամանակից և տարածությունից դուրս, ամեն մի երկրի և ամեն մի դարաշրջանի հողագործությունը»[3]։

Այսպիսով, դասակարգային հակասությունների սրումը կապիտալիզմի ժամանակ, վախը սոցիալիստական հեղափոխությունից ստիպում է բուրժուազիային հրաժարվել հողի ազգայնացման պահանջից։

Մարքսի առաջադրած հողի ազգայնացման պահանջն իմպերիալիզմի դարաշրջանում ստեղծագործաբար զարգացրեց Վ. Ի. Լենինը։ Հողի ազգայնացման պահանջը Լենինն առաջին անգամ առաջադրեց «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատության մեջ։

1903 թ. կայացած ՌՍԴԲԿ II համագումարը ագրարային հարցը քննարկելուց հետո հիմնականում սահմանափակվեց օտրեզկաները վերադարձնելու և ճորտատիրական իրավունքի մյուս մնացուկները վերացնելու պահանջով։

ՌՍԴԲԿ առաջին ագրարային ծրագիրը չէր սպառում ագրարային պրոբլեմի հիմնական կողմերը։ Բավական է ասել, որ ծրագրում բացակայում էր կալվածատիրական հողերի բռնագրավման պահանջը և ոչ մի խոսք չէր ասվում հողի ազգայնացման մասին։

Բայց չէ՞ որ Լենինը իր վաղ աշխատություններում, մասնավորապես «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատության մեջ արդեն մշակել և գիտականորեն հիմնավորել էր հողի ազգայնացման պահանջը։ Սակայն որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներ հարկադրեցին Լենինին զգուշորեն նախապատրաստել այդ հարցի իրագործումը։

Նախ՝ հարկավոր է նկատի ունենալ, որ Լենինն ագրարային-գյուղացիական հարցը մշակում էր լիբերալ նարոդնիկների դեմ մղվող սուր գաղափարական պայքարի պայմաններում։ Հայտնի է, որ լիբերալ նարոդնիկները մարքսիզմին հակադրում էին իրենց մանրբուրժուական գաղափարախոսությունը՝ Ռուսաստանի ոչ կապիտալիստական ուղու, համայնական հողատիրության, գյուղացիության՝ որպես երկրի հասարակական զարգացման հիմնական ուժի և այլնի մասին։ Երկրորդ՝ XX դ. սկզբին գյուղացիական շարժումները դեռևս մասսայական բնույթ չէին ստացել, դեռևս պարզ չէր, թե ինչպիսի ծավալ և ընթացք կստանան դրանք։ «1903 թ., երբ մեր կուսակցության II համագումարն ընդունեց ՌՍԴԲԿ առաջին ագրարային ծրագիրը, գյուղացիական շարժման բնույթի, չափի և խորության վերաբերմամբ այդպիսի փորձ մենք նույնպես չունեինք։ 1902 թ. գարնանը Ռուսաստանի հարավում տեղի ունեցած գյուղացիական ապստամբությունները մնացին որպես առանձին բռնկում։ Այս պատճառով հասկանալի է սոցիալ-դեմոկրատների զսպվածությունն ագրարային ծրագիր մշակելիս. բուրժուական հասարակության համար այդպիսի ծրագիր «հորինելը» պրոլետարիատի գործը չէ բոլորովին, իսկ թե զարգանալու իսկապես որքան ընդունակ է գյուղացիության շարժումն ընդդեմ ճորտատիրության մնացորդների, մի շարժում, որն արժանի է պրոլետարիատի աջակցությանը,— այս անհայտ էր մնում...»[4]։

---

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 13, էջ 382։

4 Նույն տեղում, էջ 321—322։

Այս հանգամանքը ստիպում էր Լենինին հատուկ մոտեցում ցուցաբերել ագրարային ծրագիրը ձևակերպելիս, պատմականորեն հարկագրում նրան առաջադրել այնպիսի պահանջներ, որոնք անմիջապես հարվածում էին ճորտատիրական մնացուկներին։

Օտրեղկաները վերադարձնելու պահանջը նպաստում էր ճորտատիրական կարգերի մնացորդների վերացմանը և օժանդակում գյուղում դասակարգային պայքարի ազատ զարգացմանը։ Այս առումով անկասկած է, որ օտրեղկաները վերադարձնելու պահանջն ունեցավ իր դրական նշանակությունը։ Սակայն չէր կարելի սահմանափակվել միայն դրանով։

Ագրարային այս ծրագիրը սոցիալ-դեմոկրատիայի ոչ թե վերջնական նպատակն էր, այլ նրա մերձավորագույն պահանջը։

Վերջապես, ծրագիրը մշակելիս Լենինն ստիպված էր հաշվի առնել Պլեխանովի և «Իսկրայի» մյուս խմբագիրների տեսակետները, որոնք զգալի ազդեցություն ունեին համագումարում։ Եվ քանի որ այն ժամանակ համագումարի ուշադրության կենտրոնում էին գտնվում այնպիսի առաջնահերթ խնդիրներ, ինչպիսիք են նոր տիպի մարքսիստական կուսակցության ստեղծման, նրա ծրագրի և կանոնադրության մշակման հարցերը, այդպիսի պայմաններում Լենինը չցանկացավ ագրարային հարցում եղած տարաձայնությունները մղել առաջին պլանի վրա։ Իհարկե, եթե Պլեխանովը և «Իսկրայի» մյուս խմբագիրները ագրարային հարցում պաշտպանեցին մարքսիստական տեսակետ, ապա անկասկած ՌՍԴԲԿ առաջին ագրարային ծրագիրը կլիներ ավելի արմատական, քան այն, որ ընդունվեց II համագումարում։

Բայց, չնայած ծրագրի այս թույլ կողմերին, այն անկասկած խաղաց իր պատմական դերը։ Ագրարային առաջին ծրագիրն ազատագրական մեծ գաղափարներ տարածեց Ռուսաստանի գյուղացիության շրջանում։ Նրա անգնահատելի ծառայությունն այն է, որ նա նպաստեց և ռուսական առաջին հեղափոխության տարիներին լայն թափ տվեց ագրարային շարժմանը։

Միաժամանակ հարկավոր է նշել, որ գյուղացիական շարժման հետագա զարգացումը ապացուցեց, որ չէր կարելի սահմանափակվել II համագումարում ընդունած ագրարային ծրագրով, այլ անհրաժեշտ էր առաջարկել ավելի խոր հեղափոխական պահանջներ։

1905 թ. դեկտեմբերին կայացած Տամբոֆոսի կոնֆերանսը Վ. Ի. Լենինի առաջարկով որոշեց ծրագրից հանել օտրեզկաներին վերաբերող կետը և այն փոխարինել հետևյալ պահանջով՝ «կուսակցությունը պաշտպանում է գյուղացիության հեղափոխական միջոցառումներն ընդհուպ մինչև ամբողջ պետական, եկեղեցապատկան, վանքապատկան, արքունական, կաբինետային ու մասնատիրական հողի բռնագրավումը, իրեն գլխավոր ու մշտական խնդիր դնելով՝ գյուղական պրոլետարիատի ինքնուրույն կազմակերպումը, նրա շահերի և գյուղական բուրժուազիայի շահերի անհաշտ հակադրությունը նրան բացատրելը, սոցիալիզմի վերջնական նպատակի մատնանշումը ....»[5]։

1906 թ. ապրիլին Ստոկհոլմում գումարված ՌԱԴԲԿ IV միավորիչ համագումարում ծավալվեց սուր, լարված պայքար ագրարային հարցի շուրջը։ Հիմնական զեկուցողները առաջադրում էին հարցի լուծման սկզբունքորեն տարբեր

5 ՍՄԿԿ-Ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների ռանաձևերում ու որոշումներում, I մ., Երևան, 1954, էջ 124։

եղանակներ։ Վ. Ի. Լենինը պաշտպանում էր հողի ազգայնացման նախագիծը, Պ. Մասլովը և Պլեխանովը՝ մունիցիպալիզացիայի նախագիծը, Շմիդտը՝ ագրարային հանձնաժողովի նախագիծը, իսկ Բորիսովը պաշտպանում էր բաժանքի նախագիծը։

Համագումարում, հատկապես, լարված պայքար ծավալվեց երեք նախագծերի՝ ազգայնացման, մունիցիպալիզացիայի և բաժանքի շուրջը։ Դա վկայում է, թե որքան բարդ և խճճված էր ագրարային հարցը ռուսական սոցիալ-դեմոկրատիայի համար։ Եվ զարմանալի չէ, որ այդ հարցի շուրջը համագումարում տիրում էր լիակատար անհամաձայնություն։ Լուրջ տարաձայնություններ գոյություն ունեին ոչ միայն բոլշևիկների և մենշևիկների, ոչ միայն մենշևիկների, այլ նաև բոլշևիկների միջև։ Մենշևիկներն, օրինակ, միաժամանակ քվեարկում էին և՛ մունիցիպալիզացիայի և՛ բաժանքի, և՛ տակտիկական բանաձևի օգտին։

Բոլշևիկ պատգամավորների ճնշող մեծամասնությունը պաշտպանում էր բաժանքի նախագիծը։ Թեև բաժանարարների ագրարային նախագիծը զգալիորեն տարբերվում էր ազգայնացման լենինյան նախագծից, այնուամենայնիվ, դա մենշևիկյան նախագծի ուղղակի հակապատկերն էր։

Համեմատելով բաժանարարների ագրարային նախագիծը մենշևիկյան մունիցիպալիզացիայի հետ, Լենինը գրում էր. «Ինչ վերաբերում է հողը բաժանելու ծրագրին, ապա համագումարում իմ վերաբերմունքը դրան ես արտահայտեցի հետևյալ խոսքերով. մունիցիպալացումը սխալ է և վնասակար, բաժանումը, իբրև ծրագիր, սխալ է, բայց վնասակար չէ։ Ուստի ես, իհարկե, ավելի մոտիկ եմ բաժանման և պատրաստ եմ քվեարկելու հօգուտ Բորիսովի ընդդեմ Մասլովի։ Բաժանումը վնասակար չի կարող լինել, որովհետև նրան կհամաձայնեն գյուղացիները, այս մեկ. այն չպետք է պատճառաբանել պետության հետևողական վերակառուցմամբ, այս՝ երկու։ Ինչու՞ է այն սխալ։ Որովհետև այն միակողմանիորեն գյուղացիական շարժումը դիտում է սոսկ անցյալի ու ներկայի տեսակետից, առանց նկատի ունենալու ապագայի տեսակետը»[6]։

Բաժանարարները պահանջում էին բռնագրավել և գյուղացիության մեջ բաժանել բոլոր կալվածատիրական հողերը։ Նրանց ծրագիրը կրում էր հեղափոխական-դեմոկրատական բնույթ։ Նրանք առաջադրում էին մարտնչող ծրագիր՝ ուղղված միապետության և նրա տնտեսական հիմքը կազմող կալվածատիրական հողատիրության դեմ։

Բաժանարարների ծրագրի անվիճելի արժանիքներից մեկն էլ այն էր, որ նա տոգորված էր գյուղացիական հեղափոխության լիակատար հաղթանակի և ճորտատիրական մնացուկների լիակատար ոչնչացման գաղափարով։

Այսպիսով, բաժանարարների նախագիծը բովանդակում էր հետևյալ հեղափոխական պահանջները.

1) հեղափոխական ուղիով բոլոր կալվածատիրական հողերի բռնագրավում,

2) գյուղացիական կոմիտեների միջոցով բռնագրաված հողերի անհապաղ և անվարձահատույց հանձնում աշխատավոր գյուղացիությանը,

3) տիրապետող դասակարգի բոլոր արտոնությունների վերացում։

---

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, էջ 432։

Բացի այդ, բաժանարարները պահանջում էին ազգայնացնել անտառները, ընդերքը, ջրերը և այլն։ Նախագծի եզրափակիչ մասում հիմնավորում էր գյուղական պրոլետարիատին կազմակերպելու անհրաժեշտությունը, որ լիովին համընկնում էր լենինյան պահանջի հետ։

Սակայն բաժանարարների նախագիծը զերծ չէր լուրջ սխալներից։ Ծրագիրը բավարարվում էր միայն կալվածատիրական հողերը գյուղացիների միջև բաժանելու պահանջով։ Իսկ դա նշանակում էր սահմանափակել հեղափոխության զարգացումը, ընդհատել հեղափոխության անընդհատության պրոցեսը։ Բաժանարարները չկարողացան ըմբռնել պերմանենտ հեղափոխության մարքս-լենինյան ուսմունքը։

Ինչ խոսք, այս սխալներով հանդերձ, բաժանարարների նախագիծը մնում էր որպես հեղափոխական-դեմոկրատական փաստաթուղթ։ Ահա ինչու Լենինն սկզբունքորեն չէր մերժում բաժանարարների նախագիծը, թեև անհրաժեշտ էր համարում, որպեսզի բաժանքին նախորդի ազգայնացումը։

Բոլշևիկ պատգամավորները թեև ագրարային հարցում պաշտպանում էին տարբեր տեսակետներ, այնուամենայնիվ, նրանք մենշևիկների դեմ պայքարելիս գտնում էին ընդհանուր գիծ, հանդես գալով միասնաբար։ Հանուն այդ միասնության Լենինը քվեարկությունից հանեց ազգայնացման նախագիծը և պաշտպանեց բաժանարարներին։

Իսկ ինչպիսին էին քվեարկության արդյունքները։ Սկզբում քվեարկության դրվեց մենշևիկյան մունիցիպալիզացիայի նախագիծը։ Այս նախագիծը մեծամասնություն շահեց, որովհետև համագումարում գերակշռում էին մենշևիկ պատգամավորները։

Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ հողի մունիցիպալիզացիան սնանկ և անկենսունակ պահանջ էր։ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան ՌՍԴԲԿ IV միավորիչ համագումարից հետո, փաստորեն, մնաց առանց ագրարային ծրագրի։ Մենշևիկները, մոռանալով իրենց մունիցիպալիզացիայի ծրագիրը, քայլ առ քայլ գլորվում էին կադետների գիրկը, որոնց հետ նրանք արդեն սկսել էին կապեր հաստատել։

Համագումարից անմիջապես հետո ագրարային հարցը նորից օրակարգի մեջ դրվեց։

1917 թ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո բոլշևիկյան կուսակցության ագրարային ծրագրի հիմնական կետը կազմում էր կալվածատիրական հողերի բռնագրավման և բոլոր հողերի ազգայնացման պահանջը։ Այդ պահանջը, սակայն, դրվում էր նոր հիմքերի վրա և հետապնդում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական այլ նպատակներ։ «Ներկայումս հեղափոխությունը ագրարային հարցը Ռուսաստանում դրել է անչափ ավելի լայն, ավելի խորը և ավելի սուր, քան 1905—1907 թվականներին»[7]։

Եթե կալվածատիրական հողերի բռնագրավումը մահվան է դատապարտում կալվածատիրական դասակարգին, ապա բոլոր հողերի ազգայնացումն իր հերթին կործանիչ հարված է հասցնում կապիտալիստական սիստեմին ընդհանրապես։ Սոցիալիստական հեղափոխության պայմաններում, այդ նույն պահանջը արմատախիլ է անում բուրժուազիայի ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական հիմքերը։

---

[7] Նույն տեղում, հ. 13, էջ 553։

«Գործի այսպիսի դրությամբ հողի ազգայնացումը ևս ագրարային ծրագրում անխուսափելիորեն այլ դրվածք է ստանում։ Այն է՝ հողի ազգայնացումը ոչ միայն բուրժուական հեղափոխության «վերջին խոսքն է», այլ մի քայլ է դեպի սոցիալիզմ»[8]։

1917 թ. ապրիլի 3-ին վերադառնալով Ռուսաստան, Լենինը անմիջապես կոչ արեց կուսակցությանը պայքարել կալվածատիրական հողերի բռնագրավման համար։ «.... Գյուղացիական մասսան,— գրում էր Լենինը,— կարող է ագրարային անխուսափելի և հասունացած հեղաշրջումը հասցնել կալվածատիրական ամբողջ անծայրածիր հողատիրության բռնագրավման»[9]։ Նա քննադատում էր էսէռա-մենշևիկյան առաջնորդներին՝ գյուղացիների այդ կեղծ բարեկամներին, որոնք ագրարային հարցի լուծումը հետաձգում էին մինչև Սահմանադիր ժողովը։ Ի հակակշիռ դրան կուսակցության առաջնորդը խորհուրդ էր տալիս գյուղացիներին չսպասել Սահմանադիր ժողովին և անմիջապես բռնագրավել կալվածատերերի հողերը։ «Հողի ազգայնացումը, իբրև հողի մասնավոր սեփականության վերացում, գործնականում կնշանակեր այնպիսի ուժգին հարված ընդհանրապես արտադրության բոլոր միջոցների մասնավոր սեփականությանը, որ պրոլետարիատի կուսակցությունը պետք է ամեն տեսակ աջակցություն ցույց տա նման վերափոխությանը»[10]։

Էսէռները և մենշևիկները վստահություն հայտնելով ժամանակավոր կառավարությանը, կոչ էին անում աշխատավոր գյուղացիությանը սպասել Սահմանադիր ժողովին, համոզելով նրան, որ վերջինս կլուծի ագրարային գյուղացիական հարցը։ «Պետական Դումայի ժամանակ,— գրում էր էսէռական կուսակցության առաջնորդ Վիկտոր Չեռնովը (Տուչկինը),—հողի կազմակերպված բռնագրավումը . . . ներկայացնում էր ագրարային հարցի լուծման միակ ուղին։ Դումայից ոչինչ չէր կարելի սպասել, այժմ պետք է սպասել Սահմանադիր ժողովին»[11]։

Բոլշևիկյան կուսակցության ագրարային նոր ծրագրի հիմնական դրույթները հստակորեն ձևակերպվեցին Համառուսաստանյան VII ապրիլյան կոնֆերանսում։ Կոնֆերանսն ագրարային հարցում, հետևելով Լենինի ցուցումներին, ընդունեց հետևյալ բանաձևը.

«1. Պրոլետարիատի կուսակցությունը բոլոր ուժերով պայքարում է բոլոր կալվածատիրական (ինչպես նաև արքունական, եկեղեցական, կաբինետային և այլն և այլն) հողերը Ռուսաստանում անհապաղ ու լիովին բռնագրավելու համար...

3. Պրոլետարիատի կուսակցությունը պահանջում է պետության մեջ եղած բոլոր հողերի ազգայնացում. ազգայնացումը, որ նշանակում է բոլոր հողերի սեփականության իրավունքի հանձնում պետության ձեռքը, հողի տնօրինության իրավունքը հանձնում է տեղական դեմոկրատական հիմնարկություններ-ի ձեռքը . . .

---

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 13, էջ 554։

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 495։

10 ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, 1-ին մաս, էջ 426։

11 Е. А. Мороховец, Аграрные программы российских политических партий в России в 1917 г., Л., 1929, стр. 106.

5. Կուսակցությունը խորհուրդ է տալիս գյուղացիներին կազմակերպված ձևով վերցնել հողը, բնավ թույլ չտալով գույքի ամենափոքր փչացում և հոգ տանելով արտադրության ավելացման մասին»[12]։

Ապրիլյան կոնֆերանսի որոշումները հսկայական նշանակություն ունեցան գյուղացիությանը պրոլետարիատի կողմը գրավելու գործում։

Հայտնի է, որ կապիտալիզմի ժամանակ պրոլետարիատի օգնությունը գյուղացիությանը հիմնականում սահմանափակվում է քաղաքական շրջանակով։ Քաղաքական իշխանությունից և արտադրության միջոցներից զրկված բանվոր դասակարգը, հասկանալի է, չէր կարող նյութական օգնություն ցույց տալ գյուղացիությանը։ Բայց քաղաքական իշխանությունը նվաճելուց հետո բանվոր դասակարգը և նրա կուսակցությունը հնարավորություն են ստանում աղատելու աշխատավոր գյուղացիներին ոչ միայն դարավոր խավարից, այլև՝ տնտեսական ծանր դրությունից։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո բոլշևիկներն անհապաղ լուծեցին գյուղացիությանը հուզող հողի հարցը։

Սովետների համառուսաստանյան երկրորդ համագումարում Վ. Ի. Լենինը հռչակեց հաշտության և հողի մասին դեկրետները։ Հողի մասին դեկրետում, որպես նրա բաղկացուցիչ մաս, մտավ գյուղացիական «նակաղը», որը դեռ Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ կազմել էր «Известия Всероссийского Совета крестьянских депутатов» թերթի խմբագրությունը՝ 242 տեղական գյուղացիական նակազների հիման վրա։

Բոլշևիկյան կուսակցության ագրարային ծրագիրը և «նակազի» պահանջները նույնանում էին մի շարք հիմնական հարցերում։ Ինչպես բոլշևիկյան ծրագրում, այնպես էլ «նակազում» պահանջվում էր բռնագրավել կալվածատիրական հողերը, կարմիր թելի պես անցնում էր հողի մասնավոր սեփականության վերացման պահանջը և այլն։ Սակայն «նակազում» տեղ գտած հավասար հողօգտագործման գաղափարը չէր կարող բոլշևիկյան կուսակցության ծրագրային պահանջ հանդիսանալ։ Դա առաջ էին քաշել էսէռները։ Բոլշևիկները, այնուհանդերձ, ընդառաջելով գյուղացիական մասսայի ցանկությանը ընդունեցին այդ սկզբունքը։

Հեղափոխության բոլոր թշնամիները, այդ թվում և մենշևիկները, էսէռները թշնամական պրոպագանդա ծավալեցին սովետական իշխանության հողի դեկրետի դեմ։ Գյուղացիական «նակազի» օգտագործումն առիթ տվեց հեղափոխության թշնամիներին մեղադրել բոլշևիկներին, թե նրանք հրաժարվել են հողի ազգայնացման իրենց պահանջից և կենսագործել էսէռական կուսակցության ծրագիրը։ Այդ խմբին միացավ նաև Կաուցկին։

Էսէռական կուսակցությունը գյուղացիական մասսայի ճնշման տակ ընդունել էր հողօգտագործման հավասարար կամ հողի սոցիալիզացիայի ծրագիրը։ Բայց շուտով նա հրաժարվեց իր ծրագրից և միայն բոլշևիկյան կուսակցությունը կյանքում կենսագործեց գյուղացիության դարավոր պահանջը և երազանքը։

---

12 ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, 1-ին մաս, էջ 427—428։

Ինչ տվեց աշխատավոր գյուղացիությանը սովետական հողի դեկրետը։ Նախ, նշենք, որ դեկրետը արտահայտում էր, ինչպես չքավոր գյուղացիության, այնպես էլ միջակ գյուղացիության շահերը։ Չքավոր գյուղացիները, բատրակները և միջակները հող ստացան։ Բացի այդ, նրանց անցավ կալվածատերերից բռնագրաված ինվենտարը, անասունները, գույքը, որի օգնությամբ նրանք կարող էին մշակել իրենց հողերը։ Դեկրետը արտահայտում էր նաև միջակ գյուղացիության շահերը, լայն հնարավորություն ընձեռում ընդլայնելու իրենց տնտեսությունը։ Մանր և միջին գյուղացիական տնտեսությունները ոչ միայն պահպանեցին իրենց հողակտորները, այլև ընդարձակելու հնարավորություն ստացան։ Այսպիսով, դեկրետը բավարարում էր գյուղական աշխատավորության լայն մասսաների պահանջը։

Դեկրետի հիման վրա կենսագործված ագրարային մեծ վերափոխումների շնորհիվ Ռուսաստանի գյուղացիները ձրի ստացան ավելի քան 150 միլիոն հեկտար կալվածատիրական, արքունական, վանքապատկան և այլ հողեր։

Գյուղացիներն աղատվեցին կալվածատերերին ու բուրժուազիային ամեն տարի վարձակալական վճարումներ մուծելուց և նոր հողեր գնելու ծախսերից, որոնք ընդամենը կազմում էին 700 միլիոն ռուբլի ոսկով։ Վերացվեց նրանց մոտ 3 միլիարդ ռուբլի պարտքը հողային բանկին։ Վերջապես գյուղացիությունը ստացավ մոտավորապես 300 միլիոն ռուբլու արժողությամբ կալվածատիրական ինվենտար։ Աշխատավոր գյուղացիության բազմամիլիոն զանգվածները մեծագույն հեղափոխական խանդավառությամբ ընդունեցին հողի դեկրետը, դա անվանելով «սուրբ դեկրետ»։

ЛЕНИНСКАЯ ПРОГРАММА РАЗРЕШЕНИЯ АГРАРНОГО ВОПРОСА В РОССИИ

М. А. МУРАДЯН

Резюме

Марксистско-ленинская теория учит, что аграрно-крестьянский вопрос является составной частью общего вопроса социалистической революции и пролетарской диктатуры.

Краеугольным камнем аграрно-крестьянской программы марксистской партии является выдвинутое Марксом требование национализации земли. Дальнейшее развитие этой программы неразрывно связано с именем В. И. Ленина. Ведя борьбу против оппортунистов всех мастей, Ленин научно обосновал и защитил учение Маркса. Более того, большевики во главе с Лениным осуществили на практике теоретическое учение Маркса. Именно советская власть на заре своего существования приняла Декрет о земле и тем самым, передав землю в руки трудового крестьянства, уничтожила в России помещичье землевладение.